ԾԹ.

Մահուան անորէն յարձակում մ'է որ կը տեղեկագրուի Հ. Մանուէլի հետագայ նամակին մէջ։

Այդ մասին՝ շարաթ մը վերջ համառօտիւ Հ. Եղիա ևս գրած է այսպէս. «Ոմանք «մահուանք ապստամբեցան և զմեծագոյն վնաս հասուցին գիւղօրէից, և մանաւանդ «կեռլեցւոց, ոչ թէ զքաղաքս նոցին աւերեալ կողոպտեցին զինչսն, այլ զոմանս ի «վաճառականաց նոցին ըմբռնեալ կողոպտեցին, և զեզինս իւրեանց կերին, և որքան «զբազմութենէ նոցին համբաւեն, ոչ են այնքան, և ոչ գոյ երկիւղ, զի բազումք «տրակօն, նաև ռացի կատանայք գնացին ընդդէմ նոցա, և զմասն ինչ ի նոցանէ «սպաննեն և զոմանս ըմբռնեալ բերին ի թմշուարու բերդն» (Գր. 1735 *Մայիս* 19 [*Պելկրատ*])։

Գերյարգեցելոյ հօրդ իմոյ քաղցրագունեղ սրտիս
զեկուցմունք տրտմախառունք

. . . . մեր հայոց մէջէն գոն բազումք դրամատեարք որք ձ[հարիւր]աւորք եզինք գնեն և հայր Թէոդորոսն լաւ գիտէ որ ի մեծ մահարիստան խոտաւէտ տեղեանք գոն, անդ պահեն և զիրացնեն զեզինքն. և այս մայիսի Բսն կամ Գն ոչ գիտեմ, թէ զինչ լուեալք անհաւատ մահարք և թշնամիք հայոց՝ յանկարծ սրտապնդեալ բազումք որպէս թէ ապստամբք կայսերն համարձակեալ մտեալք են բազումք հեծելօք ի փուստան և արձակեալք ի վերայ հայոց, մանաւանդ կէռլէցոց. զբնաւ ձիանքն և եզինք բազումք, այլ և զբովանդակաց զդրամքն, զհանդերձսն և զայլ ամենայն ինչ զկահս և զկարասիս թողեալք զնոսին մօրէ մերկ և գնացեալք։ Եկ և տես քաղաքիս լացն և երկիւղն, և այժմ նոյն Պէչ գնացօղք ևս՝ ի յերկիւղէ դադարեցան ի գալն։ Վերջապէս ո՞վ գիտէ թէ որ զօրանայցէ տէր զաւառացս, կարէ լինիլ թէ թերևս.... [1], *և թէ ոչ գիտութիւն լիցի, զի ոչ միայ ազգն մեր թարց զերութեան և սպանեցման բազումք, տեսցէ տէր և ողորմեսցի։ . . . Նաևս ի կէռլէյու առեալ եմ ի տէր մինասէն հաստատ վկայութիւն, զի նա տարին Ա անգամ կամ Բ տարին մի անգամ կու գայ աստ հրամանաւ եպիսկոպոսին վիզիթացիա, առ ի քննել զքահանայս և զժողովուրդս...*

Մնամ պատրաստական ծառայ

Հ. Մանուէլ [*խուպեսէրեան*] *կրօնաւոր*

1735 *մայիսի ժին գրեցի*

[*կէռլա*]

Կ.

Պելկրատի մէջ Հ. Եղիայի առաքելական պաշտօնը իր վախճանին կը հասնի՝ հասակին ծանրութեան և խանգարուած առողջութեան պատճառաւ։ Ու այս՝ կ'արժէ իբրև ապացոյց մէջ բերել առ Աբբահայրն ուղղած Մայիս 19 *թուակիր մէկ թուղթէն՝*

---

1. *Անընթեռնլի է բառս, ցեցակեր ըլլալով կիսով չափ.*